Այժմ մենք ստիպված ենք ընտրել՝ խայտառակ հաշտություն ու ստրկություն՞ն, թէ՞ պատերազմ։

Մեծ պատասխանատուության գիտակցությամբ հայրենիքի և դալիք սերունդների առջև՝ մենք առանց տատանվելու արինք ընտրությունը։

Մենք չստորագրեցինք խայտառակ հաշտությունը։

Հաշտության բանակցությունները Թուրքիայի հետ խզված են։

Այսուհետև վէճը լուծվում է զէնքի զօրությամբ, պատերազմի դաշտում։

Եւ այս ժամին մենք դիմում ենք ձեզ, որովհետև ձեզանից, ձեր արիությունից, ձեր գրկանքի ու զոհաբերության պատրաստակամությունից է կախված ձեր և ձեր զաւակների ապագան։

Քաղաքացինե՛ր։ Ռուսաստանի հետ մէկտեղ ցարիզմը տապալեցիք ա՞յն նպատակով, որ դառնաք Թուրքիայի ստրկացած մի նահանգը։

Գիւղացինե՛ր։ Յեղափոխությունը նրա համա՞ր ձեզ հող տուեց, որ նւաճողը այդ հողի վրա բնակեցնէ նոր կալւածատէրեր։

Բանւորնե՛ր։ Արդեօք ա՞յն նպատակով բարձրացրիք յեղափոխության դրօշը, որ նրան ցեխի մէջ կոխկրտէ յաղթողի ոտքը։

Խայտառակություն ու ստրկություն կամ պատերազմ — ուրիշ ընտրություն չկայ մեր առջև։ Թո՛ղ, ուրեմն, մեր երկրի բոլոր ժողովուրդների գլխին սպառնացող ահաւոր վտանգի հանդէպ լռեն բոլոր վէճերը, վերջանան թշնամանքն ու պառակտումը, որոնք մինչև այսօր քայքայում էին մեր շարքերը։

Յաւիտենական ստրկության պարանը ձգված է մեր երկրի բոլոր ժողովուրդների վրին. Թո՛ղ, ուրեմն, թշնամու դրոհը խորտակի՝ դարնելով մեր վճռականության՝ մինչև վերջ պաշտպանելու այնքան սերունդների արիւնով ողողված մեր հողը։

Ի զէ՛ն ամենքդ։

Դէպի ճակա՛տ ամենքդ։

Ամենքդ՝ ի պաշտպանություն ազատության ու հայրենիքի»։

Այս կոչը տպուեց բոլոր լեզուներով և տարածուեց ժողովրդի մէջ։

Իսկապէս, Սէյմի որոշումը պատերազմը շարունակելու մասին նորություն էր միայն վրացիների համար, որովհետև հայերն արդէն իսկ պատերազմի մէջ էին։ Այդ պատճառով, վրացի ղեկավարները դիմեցին աղմկոտ աշխատանքի։ Շատերը նրանցից, որոնց մէջ և Ժորդանիան ու Ծերեթելին, հրացան առած, մեկնեցին ռազմաճակատ։ Մի պահ Թիֆլիսում ստեղծուեց պատերազմական բարձր տրամադրություն։

Սակայն, այս ոգևորությունը տեւեց շատ կարճ. հազիւ ծովի փրփուրի կեանք ունեցաւ։ Դեռ նոր էին լռել ռազմատենչ ճառերը Թիֆլիսի պալատի կամարների տակ, երբ ստացուեց Բաթումի անկման գոյժը։ Ապրիլ 1-ին, առանց դիմադրության հանձնվելու, թուրքերը գրաւել էին Բաթումի ամ-